# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
# ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/21 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **07.04.2020թ.**

31.03.2020-07.04.2020թթ. ՀՀ, ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3 հասցեում գտնվող «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի շենքում տեղի ունեցավ Երևան քաղաքի կանաչապատման համար 2020թ. անհրաժեշտ ծառերի և թփերի ձեռքբերման ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/21 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Ա. Գրիգորյան՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի գլխավոր դենդրոլոգ,

Հ. Խուրշուդյան՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի փորձագետ,

Ա. Տեր-Գրիգորյան՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի փորձագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Գրիգորյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի գնումների և նյութական ապահովման բաժնի պետը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:

4. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2020թ.-ի մարտի 31-ին, ՀՀ, ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3 հասցեում գտնվող «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի շենքում ժամը 11:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով գներ սահմանված չեն՝ Կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|
| 1 | Սակուրա Ռոյալ Բուրգունդի | - |
| 2 | Սակուրա թափվող Սերուլատա | - |
| 3 | Սզնի սուկուլենտ "Ջուբիլե" | - |
| 4 | Սոսի գնդաձև | - |
| 5 | Դրախտածառ Կարմիր տերևներով | - |
| 6 | Բոխի բրգաձև պ. ձ. Լուկաս | - |
| 7 | Թխկի Կարմիր | - |
| 8 | Սզնի միջին պ.ձ. "Պաուլուս Սքարլեթ | - |
| 9 | Կատալպա գնդաձև ծախկող | - |
| 10 | Բուդլեյա Դավիդի | - |
| 11 | Եղրևանի հնդկական | - |
| 12 | Դեյցիա շքեղ | - |
| 13 | Վարդ շտամպի վրա | - |
| 14 | Վարդ շտամպի վրա | - |
| 15 | Վարդ շտամպի վրա | - |

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց տեղեկատվություն գրանցամատյանում կատարված գրառումների մասին և Հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ պարունակող ծրար կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները:

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ |
|---|---|---|
| 1 | «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ | Հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Նոր-Գյուղ 1 փ. 1/3 տարածք, հեռ.՝ 033338888, info@kanachheqiat.am |
| 2 | «ԷԿՈ ՊԱՐԿ» ՍՊԸ | Հասցե՝ ՀՀ, մարզ Կոտայք, համայնք Ջրվեժ Երևան-Գառնի մայրուղի 16/5, հեռ.՝ 077636058, ekopark01@gmail.com |
| 3 | «ՍԱՊ» ՍՊԸ | Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1փ. /Շ/15/բն.46, հեռ.՝ 096013388, sergeypet97@gmail.com |
| 4 | «ՊՍՏՈ» ՍՊԸ | Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Էստոնական փ. 9, բն. 28, հեռ.՝ +374 93 36 90 40, psto.01@mail.ru |
| 5 | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | Հասցե՝ ՀՀ, Արագածոտնի մարզ, գյուղ Բազմաղբյուր, փ. 6 տուն 2, հեռ.՝ +374 77109498, artur90.91@mail.ru |

Հանձնաժողովը գնահատեց հայտ պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված ծրարները կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան և բացեց համապատասխանող գնահատված հայտերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ.

1. «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ, «ԷԿՈ ՊԱՐԿ» ՍՊԸ-ի, «ՊՍՏՈ» ՍՊԸ-ի, «Արտ-Բիլդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարներում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան:
2. «ՍԱՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում առկա փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ Հավելված 1.1-ով 57-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Մասնակիցների առաջարկած գները | | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Սակուրա Ռոյալ Բուրգունդի | «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ | 55,000.00 | 5,000.00 | 0.00 | 60,000.00 |
| | | «ՊՍՏՈ» ՍՊԸ | 1,000,000.00 | 2,000,000.00 | 600,000.00 | 3,600,000.00 |
| | | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | 1,250,000.00 | 1,875,000.00 | 0.00 | 3,125,000.00 |
| 2 | Սակուրա թափվող Սերուլատա | «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ | 65,000.00 | 5,000.00 | 0.00 | 70,000.00 |
| | | «ՊՍՏՈ» ՍՊԸ | 400,000.00 | 800,000.00 | 240,000.00 | 1,440,000.00 |
| | | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | 500,000.00 | 900,000.00 | 0.00 | 1,400,000.00 |
| 3 | Սզնի սուկուլենտ "Ջուբիլե" | «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ | 55,000.00 | 5,000.00 | 0.00 | 60,000.00 |
| | | «ՊՍՏՈ» ՍՊԸ | 600,000.00 | 1,200,000.00 | 360,000.00 | 2,160,000.00 |
| | | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | 750,000.00 | 1,350,000.00 | 0.00 | 2,100,000.00 |
| 4 | Սոսի գնդաձև | «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ | 60,000.00 | 5,000.00 | 0.00 | 65,000.00 |
| | | «ՊՍՏՈ» ՍՊԸ | 400,000.00 | 800,000.00 | 240,000.00 | 1,440,000.00 |
| | | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | 500,000.00 | 900,000.00 | 0.00 | 1,400,000.00 |
| 5 | Դրախտածառ Կարմիր տերևներով | «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ | 75,000.00 | 5,000.00 | 0.00 | 80,000.00 |
| | | «ԷԿՈ ՊԱՐԿ» ՍՊԸ | 68,000.00 | 28,000.00 | 0.00 | 96,000.00 |
| | | «ՊՍՏՈ» ՍՊԸ | 1,200,000.00 | 2,400,000.00 | 720,000.00 | 4,320,000.00 |
| | | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | 1,500,000.00 | 2,700,000.00 | 0.00 | 4,200,000.00 |
| 6 | Բոխի բրգաձև պ. ձ. Լուկաս | «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ | 55,000.00 | 5,000.00 | 0.00 | 60,000.00 |
| | | «ՊՍՏՈ» ՍՊԸ | 800,000.00 | 1,600,000.00 | 480,000.00 | 2,880,000.00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | 1,000,000.00 | 1,800,000.00 | 0.00 | 2,800,000.00 |
| 7 | Թխկի Կարմիր | «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ | 55,000.00 | 5,000.00 | 0.00 | 60,000.00 |
| | | «ՊՍՏՌ» ՍՊԸ | 400,000.00 | 800,000.00 | 240,000.00 | 1,440,000.00 |
| | | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | 500,000.00 | 900,000.00 | 0.00 | 1,400,000.00 |
| 8 | Սզնի միջին պ.ձ. “Պաուլուս Սքարլեթ | «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ | 55,000.00 | 5,000.00 | 0.00 | 60,000.00 |
| | | «ԷԿՈ ՊԱՐԿ» ՍՊԸ | 68,000.00 | 28,000.00 | 0.00 | 96,000.00 |
| | | «ՊՍՏՌ» ՍՊԸ | 800,000.00 | 1,600,000.00 | 480,000.00 | 2,880,000.00 |
| | | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | 1,000,000.00 | 1,800,000.00 | 0.00 | 2,800,000.00 |
| 9 | Կատալպա գնդաձև ծախկող | «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ | 65,000.00 | 5,000.00 | 0.00 | 70,000.00 |
| | | «ՊՍՏՌ» ՍՊԸ | 750,000.00 | 1,500,000.00 | 450,000.00 | 2,700,000.00 |
| | | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | 937,500.00 | 1,687,500.00 | 0.00 | 2,625,000.00 |
| 10 | Բուդլեյա Դավիդի | «ՍԱՊ» ՍՊԸ | 3,000,000.00 | 2,600,000.00 | 0.00 | 5,600,000.00 |
| | | «ՊՍՏՌ» ՍՊԸ | 4,500,000.00 | 9,000,000.00 | 2,700,000.00 | 16,200,000.00 |
| | | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | 5,625,000.00 | 10,125,000.00 | 0.00 | 15,750,000.00 |
| 11 | Եղևանի հնդկական | «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ | 55,000.00 | 5,000.00 | 0.00 | 60,000.00 |
| | | «ՊՍՏՌ» ՍՊԸ | 150,000.00 | 1,200,000.00 | 270,000.00 | 1,620,000.00 |
| | | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | 187,500.00 | 1,125,000.00 | 0.00 | 1,312,500.00 |
| 12 | Դեյցիա  շքեղ | «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ | 18,000.00 | 2,000.00 | 0.00 | 20,000.00 |
| | | «ՊՍՏՌ» ՍՊԸ | 100,000.00 | 500,000.00 | 120,000.00 | 720,000.00 |
| | | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | 125,000.00 | 625,000.00 | 0.00 | 750,000.00 |
| 13 | Վարդ շտամպի վրա | «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ | 22,500.00 | 2,500.00 | 0.00 | 25,000.00 |
| | | «ՊՍՏՌ» ՍՊԸ | 160,000.00 | 320,000.00 | 96,000.00 | 576,000.00 |
| | | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | 200,000.00 | 360,000.00 | 0.00 | 560,000.00 |
| 14 | Վարդ շտամպի վրա | «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ | 22,500.00 | 2,500.00 | 0.00 | 25,000.00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | «ՊՍՏՈ» ՍՊԸ | 160,000.00 | 320,000.00 | 96,000.00 | 576,000.00 |
| | | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | 200,000.00 | 360,000.00 | 0.00 | 560,000.00 |
| 15 | Վարդ շտամպի վրա | «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ | 22,500.00 | 2,500.00 | 0.00 | 25,000.00 |
| | | «ՊՍՏՈ» ՍՊԸ | 160,000.00 | 320,000.00 | 96,000.00 | 576,000.00 |
| | | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | 200,000.00 | 360,000.00 | 0.00 | 560,000.00 |

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը,
2. Նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել «ՍԱՊ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. «ՍԱՊ» ՍՊԸ-ի կողմից 01.04.2020թ.-ին ներկայացվել են արձանագրված թերությունների շտկված տարբերակները:
2. 31.03.2020թ.-ին «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է գրություն, որով վերջինս հայտնում է, որ մեխանիկական սխալի պատճառով Հավելված 2-ով ներկայացված գնային առաջարկում նշվել է գնման առարկաների միավորների գները և որ հրաժարվում է գնումների գործընթացին հետագա մասնակցությունից, ինչպես նաև հետագայում Պայմանագիր կնքելու իրենց իրավունքից:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված պահանջները՝ «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ-ի հայտը մերժել, և համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:
3. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-9, 11-15 | «Կանաչ Հեքիաթ» ՍՊԸ | բավարար |
| 5, 8 | «ԷԿՈ ՊԱՐԿ» ՍՊԸ | բավարար |
| 10 | «ՍԱՊ» ՍՊԸ | բավարար |
| 1-15 | «ՊՍՏՈ» ՍՊԸ | բավարար |
| 1-15 | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Քանի որ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ հանձնաժողովը որոշեց.

1. Հանձնաժողովի նիստը կասեցնել բավարար գնահատված մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով:

2. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օր, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ 07.04.2020թ. ժամը 12:30-ն, ՀՀ, ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3 հասցեում գտնվող «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի շենքում:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

07.04.2020թ. կայացան գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունները: Բանակցություններին մասնակցում էին բավարար գնահատված մասնակիցներից «Արտ-Բիլդ» ՍՊԸ-ն և «ՊՍՏՈ» ՍՊԸ-ն: Հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակեց մյուս մասնակիցների համար, և բանակցությունների համար սահմանեց ժամկետ՝ յուրաքանչյուր լոտի մասով առավելագույնը 15 րոպե տևողությամբ:

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետին մասնակիցների կողմից ներկայացվեցին նոր գնային առաջարկներ, համապատասխանաբար.

- 1-ին չափաբաժնի մասով «Արտ-Բիլդ» ՍՊԸ-ի նոր գնային առաջարկը առանց ԱԱՀ կազմեց 2925000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի մասով՝ 1100000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի մասով՝ 1500000 ՀՀ դրամ, 7-րդ չափաբաժնի մասով՝ 1000000 ՀՀ դրամ, 9-րդ չափաբաժնի մասով՝ 2137500 ՀՀ դրամ, 12-րդ չափաբաժնի մասով՝ 575000 ՀՀ դրամ:
- 4-րդ չափաբաժնի մասով «ՊՍՏՈ» ՍՊԸ-ի նոր գնային առաջարկը կազմեց առանց ԱԱՀ 900000 ՀՀ դրամ, 6-րդ չափաբաժնի մասով՝ 2400000 ՀՀ դրամ, 11-րդ չափաբաժնի մասով՝ 1305000 ՀՀ դրամ,

Մյուս չափաբաժինների մասով բանակցությունների վերջնաժամկետին նոր գնային առաջարկ չներկայացվեց:

Հանձնաժողովը իրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշեց և հայտարարեց ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| N | Զբաղեցրած տեղ | Անվանում | | |
| 1 | 2 | «ՊՍՏՈ» ՍՊԸ | | 3,000,000.00 |
| | 1 | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | X | 2,925,000.00 |
| 2 | 2 | «ՊՍՏՈ» ՍՊԸ | | 1,200,000.00 |
| | 1 | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | X | 1,100,000.00 |
| 3 | 2 | «ՊՍՏՈ» ՍՊԸ | | 1,800,000.00 |
| | 1 | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | X | 1,500,000.00 |
| 4 | 1 | «ՊՍՏՈ» ՍՊԸ | X | 900,000.00 |
| | 2 | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | | 1,400,000.00 |
| 5 | 1 | «ԷԿՈ ՊԱՐԿ» ՍՊԸ | X | 96,000.00 |
| | 2 | «ՊՍՏՈ» ՍՊԸ | | 3,600,000.00 |
| | 3 | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | | 4,200,000.00 |
| 6 | 1 | «ՊՍՏՈ» ՍՊԸ | X | 2,400,000.00 |
| | 2 | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | | 2,800,000.00 |
| 7 | 2 | «ՊՍՏՈ» ՍՊԸ | | 1,200,000.00 |
| | 1 | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | X | 1,000,000.00 |
| 8 | 1 | «ԷԿՈ ՊԱՐԿ» ՍՊԸ | X | 96,000.00 |
| | 2 | «ՊՍՏՈ» ՍՊԸ | | 2,400,000.00 |
| | 3 | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | | 2,800,000.00 |
| 9 | 2 | «ՊՍՏՈ» ՍՊԸ | | 2,250,000.00 |
| | 1 | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | X | 2,137,500.00 |
| 10 | 1 | «ՍԱՊ» ՍՊԸ | X | 5,600,000.00 |
| | 2 | «ՊՍՏՈ» ՍՊԸ | | 13,500,000.00 |
| | 3 | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | | 15,750,000.00 |
| 11 | 1 | «ՊՍՏՈ» ՍՊԸ | X | 1,305,000.00 |
| | 2 | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | | 1,312,500.00 |
| 12 | 2 | «ՊՍՏՈ» ՍՊԸ | | 600,000.00 |
| | 1 | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | X | 575,000.00 |
| 13 | 1 | «ՊՍՏՈ» ՍՊԸ | X | 480,000.00 |
| | 2 | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | | 560,000.00 |
| 14 | 1 | «ՊՍՏՈ» ՍՊԸ | X | 480,000.00 |
| | 2 | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | | 560,000.00 |
| 15 | 1 | «ՊՍՏՈ» ՍՊԸ | X | 480,000.00 |
| | 2 | «Արտ-Բիլդ» ՍՊԸ | | 560,000.00 |

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ իրավերի պահանջների նկատմամբ

բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 9. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

2. Ընթացակարգի Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ պայմանագիրը ստորագրելու օրվան հաջորդող կամ Ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ՀՀ, ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3

հասցեում գտնվող «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի շենքում:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի՝** | | |
| **Նախագահ** | | Ա. Գրիգորյան |
| **Անդամներ** | | Ա. Տեր-Գրիգորյան |
| | | Հ. Խուրշուդյան |
| **Քարտուղար** | | Մ. Ղազարյան |